600.0205.24.05.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մայիսի 2017 թվականի №205Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի №642Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ «ՀՐԱԶԴԱՆ-ԷՔՊՈ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2007 թվականի դեկտեմբերի 7-ի «ՀՐԱԶԴԱՆ-ԷՔՊՈ» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №642Ա որոշմամբ «ՀՐԱԶԴԱՆ-ԷՔՊՍՈ» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է ռադիոհաճախականությունների օգտագործման №0285 թույլտվությունը, սակայն Ընկերությունը չի վճարել ռադիոհաճախականությունների օգտագործման պարտադիր վճարները, ինչի մասին վերջինս բազմիցս տեղեկացվել է, այդ թվում՝ Հանձնաժողովի 2016 թվականի հուլիսի 6-ի №ԱԲ-1373Հ, հոկտեմբերի 5-ի №ԱԲ-1950Հ, 2017 թվականի հունվարի 10-ի №ԱԲ-002Հ և ապրիլի 4-ի №ԱԲ-792Հ գրություններով,

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 17.1-րդ հոդվածի 6-րդ և 10-րդ մասերի համաձայն՝ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարը սահմանվում է տարվա համար և ենթակա է վճարման յուրաքանչյուր եռամսյակի համար հավասարաչափ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ, իսկ ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների գումարների վճարումն Օրենքով սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում գանձվում է տույժ՝ ուշացման յուրաքանչյուր օրվա համար պակաս վճարված վճարի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար,

գ) Ընկերության կողմից Օրենքի 17.1-րդ հոդվածի պահանջների խախտման՝ ռադիոհաճախականության օգտագործման վճարների չվճարման փաստի ուսումնասիրության նպատակով 2017 թվականի մայիսի 4-ին Հանձնաժողովը վերջինիս նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 4-ի №ԱԲ-1111Հ գրությամբ,

դ) Հանձնաժողովի աշխատակազմի կողմից իրականացված վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Օրենքի 17.1-րդ հոդվածի պահանջները և մինչ օրս չի կատարել ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների և ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժի վճարման պարտավորությունը, ինչպես նաև չի վճարել մինչև 2017 թվականի մայիսի 16-ը հաշվարկված 273 625 (երկու հարյուր յոթանասուներեք հազար վեց հարյուր քսանհինգ) դրամ պարտքը, որից 224 725 (երկու հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր քսանհինգ) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 48 900 (քառասունութ հազար ինը հարյուր) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը,

ե) 2017 թվականի մայիսի 16-ին Ընկերությունը դիմել է Հանձնաժողով՝ ռադիոհաճախականության օգտագործման №0285 թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով, և

հիմք ընդունելով Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1-րդ հոդվածի 11-րդ մասը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 78-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 7-ի «ՀՐԱԶԴԱՆ-ԷՔՍՊՈ» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №642Ա որոշումը:
2. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել ռադիոհաճախականության օգտագործման №0285 թույլտվությամբ նախատեսված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով մինչև 2017 թվականի մայիսի 16-ը հաշվարկված 273 625 (երկու հարյուր յոթանասուներեք հազար վեց հարյուր քսանհինգ) դրամ պարտքը, որից 224 725 (երկու հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր քսանհինգ) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 48 900

(քառասունութ հազար ինը հարյուր) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:

3. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է՝
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի, որն ուժի մեջ է մտնում 2017 թվականի մայիսի 16-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
24 մայիսի 2017թ.